

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՒՆԵԱՆՔ

Ուրբաթ, այս հոկտեմբերի
12-ին ս. էջմիածնում Հայ-
յոց Հայրապետ Վեհափառ Գէ-
որդ Ե. Կաթողիկոսը շրջապատ-
ւած արքեպիսկոպոսներով, եպիս-
կոպոսներով Գէորգեան ձեմարա-
նի ուսուցչապետներով, ուսա-
նողներով, Վաղարշապատի դըպ-
րոցների աշակերտներով և շատ
տեղերից, այս Մեծ Յօրելեանի
առիթով ս. էջմիածին զնացած,
պատգամաւորներով ու ժողովը-
դով էջման Տաճարում կատարեց
նախատօնակ մեր ս. Թարգման-
իչների Սահակի, Մեսրոպի և
նրանց յաջորդ մինչեւ օրս մեր
հանգուցեալ բոլոր գրականագէտ-
ների յիշատակին:

Հետեւեալ, շաբաթ առաւօտ ս.
Թարգմանիչների տօնի օրը Ամե-
նայն Հայոց Վեհափառ Կաթողի-
կոսը մեծաշուր հանդիսով ուղե-
ւորւեց Օշական, ուր կատարեց
ս. Մեսրոպի գերեզմանի վրայ
հանդիսաւոր պատարագ, հոգե-
հանդիսաւ և ապա Օշականի այ-
ցում հրաշափառ հանդէս: Ներ-
կայ էին աւելի քան երեք հա-
զար հոգի: Կայացաւ գպրոցում
ձաշկերոյթ, ուր խօսեցին և պատ-
գամաւորները: Երեկոյեան վերա-
դարձան ս. էջմիածին:

Կիրակի, հոկտ. 14-ին կատար-
ւեցին հանդէմներ թէ էջման Տա-
ճարում և թէ Գէորգեան ձեմար-
անում:

Թարգմանիչների տօնի օրը
կատարւել է ամեն տեղ, ուր կայ
հայ եկեղեցի, հայ դպրոց, հայ
գիր ու լեզու նոյնակէս հանդէս-
ներ:

Թիֆլիսում մեծաշուր տօնեց
Հայ Տառի 1500-ամեակի և Հայ
Տաղպրութեան 400-ամեակի նա-
խատօնակը Աղքիլը - Տարագի
Գրական-Գեղագիտական Սա-
լոնը: Հրաւերւած էին ան-
խատիր թէ հայ և թէ օտարա-
զգեայ գրականագէտներ, գե-
ղագէտներ, արևեստագէտներ,
ինչպէս և մեծ բազմութիւն
հասարակական դպրոցական գոր-

ծիչների ու ներկայացուցիչներ
հաստատութիւնների:

Տօնախմբութիւնը սկսւեց ուր-
բաթ, երեկոյեան 8 ժամին: Ս.
Թարգմանիչների մեծադիր պատ-
կերները խորասուզւած գափնեայ
ծառերի մէջ, պճնազարդւած էին
մարմարէ սիւնսեղանիկների
վրայ յունական սափորներում
թարմ վարդերով: Սրանց մէջ
տեղը բազկաթոռ և սեղան: Հան-
գէսը բացաւ մեր ծերունազարդ
ուսուցչապետ և բանաստեղծ Գէ-
որդ Բարխուդարեանը. մի հոյա-
կապ ճառով բացարեց ս. Թարգ-
մանիչների կատարած մեծ
գործի էութիւնը: Ճառը վերջա-
ցնելով, հրաւերեց հանդիսական-
ներին ընտրել մի նախադահ:
Ժողովը միահամուռ բաղձանքը,
որ հէսց ինքն էլ սահմիրայ բա-
նաստեղծն ու ուսուցչապետը
նախագահէ, անկարող եղաւ ըն-
դունել, պատճառաբանելով ոյժե-
րի սպառումը:

Ապա ժողովը միաձայն ընտ-
րեց նախագահ բժշկպ. Բ. Նաւա-
սարդեանին, որն սահմանելով
պաշտօնը, առաջարկեց նախ Գէ-
որդ Բարխուդարեանին ընտրել
պատւաւոր նախագահ: Որոտըն-
դուռ ծափահարութիւններով նշա-
նակալից այս վեհաշուր որոշումը
կատար ածեց: Ծերունազարդ
բանաստեղծի բազկաթոռը դրւեց
ս. Սահակի և ս. Մեսրոպի պատ-
կերների մէջտեղը, ուր և բազ-
մեցրւեց նա: Ապա սկսւեց հան-
գէսը: Կարգացւեցին ստացւած
բազմաթիւ շնորհաւորական Հե-
ռազիլիներից, ուղերձներից, ձօ-
ներից մի քանիսը: Շնորհաւորա-
կաներ՝ թէ հայ և թէ օտարազ-
գի գրականագէտներից, արևս-
տագէտներից, հաստատութիւն-
ներից: Եթեոյ սկսւեցին ճառա-
խօսութիւնները: Ատրպետ մի
թուոցիկ ակնարկ արաւ հայ գրի
մասին, սկսած Քրիստոսից 7-8
դար առաջ մինչեւ մեր օրերը: Մ.
Զմշկեան կարգաց Սահակի և
Մեսրոպի հակիրճ կենսագրու-
թիւնը: Ս. Եսայեան ստացւած
հետագիրներից, ձոներից և շնոր-

հաւորականներից կարդաց՝ բանստեղծ Յ. Գետրոսիանի՝ Մեծ Յօքելիանին— «Չը վիշտներ» բանստեղծութիւնը, տ. Սիրանոյշի հետագիրը՝ «Հպարտութեամբ ողջունում եմ Խօսքի և Տպագրութեան տօնը՝ հայրենի արւեստի և առաջադիմութեան անսպառ ազբիւրը։ Հեռադիրներ կային և չայց կուլտ. Ընկ. Նախագահ պ. Աստիսեանից, Թիֆլիսի արք. օպերային թատրոնի ղեկավար պ. Պալիսից և օպերային բոլոր արտիստներից, ինչպէս և Արտիստ. Ընկ. ոսական արտիստներից և դիրեկցիայից դրամատիկ. թատրոնի Զարէչնիի, պրօֆեսոր Եղիազարեանից, Տ. Վառվառէ Բալուղեանից և այլն։ Խօսքի շատերը։

Տ. էտիէն անգլիերէն արտասանեց հետեւելը

«Եւրոպական Կօլոնիայի անունից թոյլ աւէք այս փայլուն և ջերմ հանդիսում արտայալու սրտագին զգացումներ և հիացմանք։

Փառք և պատիւ բազմատանջ հայ մեծ աղքին, որ Սսիսում, վայրենի ցեղերի մէջ տարածողն է քաղաքակրթութեան, զիսութեան և արևեստի։ Ողջոյն՝ Կովկասում գտնուող երաժշկան ճեղք շնորհակալ կօլոնիայից, որը այս սիրուն և ջերմ անկինում մոռանում է, որ գտնուում է այսքան-այսքան հեռու իր սիրելի հայէկնիքից։

Կեցցէ Քրական-Գեղագիտական Սալօնը։

Հանդիսականների խնդրանօքինքը և ճառախօսը սիրայիր թարգմանեց իր ողջոյնը Քրանսերէն, որ հայերէնի վերածեց նախագահը։

Երաժշտական մասում մասնակցեցին օր. Հանէլ, պ. պ. Քալանթար, Սափարեան (ջութակ) օր. Սօլովև, պ. պ. Բրօջի, Մինասեան (երգ) օր. Հովմէլ (ցիտրա) բարօնէս Մէջէմ (արտասանութիւն) տ. Սևանովա (դաշնակ) պ. Հանէլ (վեօլիենէլ)։

Ժողովի միաձայն որոշումով Քրական-Գեղագիտական Սալօնի կողմից Էջմիածին Յօքելիանական Կենտրոնական Կօմիտէին ուղարկեց հետևեալ հեռագիրը՝ Քրական-Գեղագիտական Սալօնում ժողովւրով Սալօնի սոփրական յաճախորդները և Թիֆլիսի հայ ինտելիգեն-

ցիայի մեծ բազմութիւն, նաև ոսկեր, վրացիներ և օտարերկենայ գաղոթների ներկայացուցիչներ, անդնձն հանդիսաւորութեամբ տօնեցին այսօրւայ ազգային մեծ յիշատակը և որոշեցին իրանց միահամուռ շնորհաւորութիւնները ու որդիական ակնածութիւնների նորին Սըրութիւն Վեհական կամացի կաթողիկոսին։

Սուրապեցին Պատւաւոր նախագահ՝ Գևորգ Շարխուղարեան. Նախագահ՝ Բժշկակ, Թ. Նաւասարդիան. Տէր և տնօրին Սալօնի Տ. Նավարեան։

Ցոյցեր արին և հանդիսում գտնուող տ. և պ. Մաղէրին, որոնց նշանաւոր ձուլարանը Թիֆլիսում համարեա կէս զար մատակարարում է Կովկասի և Պարսկաստանի տպարաններին հայերէն, վրացերէն, սակէն և թրքերէն տառեր ու շատ մեծ ծառայութիւն է արել մերերկի տպարաններին, օր-օրի վրայ ճոխացնելով, նրբացնելով և շատացնելով տեղական լեզուներով տառերի տեսակները։ Նախագահի առաջարկութիւնը տ. և պ. Մաղէր (գերմանացիք) համարւեցին պատւաւոր հիւրեր այս յօքելիանին. Ցոյց արւեց և երգեցովութեան իտալացի պրօֆեսոր պ. Բրօջուն, որի հայրենիքումն է առաջին անգամ սկսւել հայ տպագրութիւնը և մինչև օրս էլ անընդհատ շարունակում է։

Հանդէսը վերջացաւ կէս գիշերին. Այդ օրը լոյս տեսաւ և Տարագի հերթական Ա-ը, ամբողջովին ներբւած Ազգային Մեծ Յօքելիանին։

Հետևեալ օրը, շաբաթ Վանքի տաճարում կատարեց հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ ո. Թարգմանիչների յիշատակին. Թիֆլիսի հայ զպրոցների, առանց բացառութեան, աշակերտներն ու աշակերտուհիները իրանց ուսուցիչներով լցրել էին Վանքի ընդարձակ եկեղեցին ու բակը. Այստեղ էին և պետական բոլոր պարոցների համար աշակերտներն իրանց ուսուցիչներով ու ուսուցչուհիներով, որ այդ օրը երկրիս ուսումնար. Հընանի հոգաբարձւի պաշտօնակատար պ. Լոպատինսկու կարգադրութեամբ նոյնայէն տօնեցին այս Մեծ Յօքելիանը։